

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Յ. ՍԻՐՈՎԻՆԻ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ*

Բ. ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ԻՐ ՆԱՐԵԿԸ

1. ՆԱՐԵԿԻ ՎԱՆՔՆ ՈՒ ԻՐ ՎԱՆԱԿԱՆԸ

Ակնարկը, զոր նվիրեցինք մտքի և գրչի վաստակին հայ հոգևորականության ամենենին պատկառեցի դեմքերեն մեկուն՝ Կոստանդնովոպոլսի Գարեգին պատրիարքին, իր կյանքի ուժանուն տարիներուն առթիվ, լրիվ պիտի ըլլար, եթե շանդրադառնայինք նաև իր գրական վաստակին մաս կազմող այն ուշագրավ երկին, որ նարեկի թարգմանությունն է, և որ ինքնին բավական էր, որպեսզի Գարեգին Տրապիզոնցին պարտը մը հասուցած ըլլար հայ գրականության:

Բայց կարծե, որ ադկե առաջ լայն փակագիծ մը բանանք նարեկին ու նարեկացին համար, հասնելե առաջ իր թարգմանիչին:

Անհրաժեշտ էր այս փակագիծը, որով հետև այլապես դժվար պիտի ըլլար ըմբռնել պաշտամունքը, որուն, ինչպես տասը դարերու ընթացքին, նույնպես և մեր օրերուն առարկա եղան մեծ վանականն ու իր երկը, և որովհետև նույն այդ պաշտամունքին պտուղն է տքնությունը, որուն հանձնառու եղավ Գարեգին Տրապիզոնցին՝ ներկա մեր հայերենին վերածելու համար հայ մատենագրության ամենեն խորունկ ու ամենեն խորհրդավոր այդ գիրքը:

Ժ դարը հայ մշակույթի պատմության ամենեն ցայտուն դարերեն մեկն է, եթե հինգերորդ դարը ոսկեղարն էր եղած հայ լեզվին, ու շշանը՝ համախմբում ճիգերու հայ մշակույթը օժտելու համար վերելքի հնարավորություններով, եթե յոթերորդ դարում խորացեր էր հայ գիտական միտքը, ճարտարապետության մեջ հայ ոճը հասեր էր ուշագրավ ինքնատիպության մը ու պատմագրությունը սկսեր էր տոգորվի ճշգրտության մտահոգությամբ, տասներորդին արդեն հայ մշակույթը ատացած է այլապես ինքնուրույն դիմագիծ մը: Հայ ճարտարապետությունը անգամ մը ևս կկոթողանայդ դարուն, և հայ ոճը նոր տարրերով կրեղմագորիլի Մտավորական կյանքի բարգավաճման ավելի լայն մղում կտրվի ու կընդհանրանան իմաստասիրական մարզանքները մենաստաններեն ներս: Մավալ կստանա հայեցողական կյանքը անոնց ծոցին մեջ, մինչ աղանդներ թե կառնեն դուրս:

Մենաստանները, որոնք սկսած էին ծավալիլ Հայաստանի մեջ արդեն է դարեն, Ժ դարուն կվերածվին արդարե մտավոր օջախներու լայն ցանցի մը: Կամրջաձոր, Հոռոմոս, Սանահին, Շիրակ, Կապուտքար, Խլաձոր, Արգինա արդեն շեն վանքեր են և հայ մշակույթի մեյմեկ լուսավոր բջիջ, ուր մարդիկ կփորձեն հորիզոն բանա, իրենց:

* Եարունակված գէմիաժին՝ ամսագրի 1960 թվականի և թ-ից, ժ-ից, ԺԱ-ԺԹ-ից և 1961 թվականի և Ա-ից:

Այդ վանքերուն մեջ մարդիկ կրանան իրենց հոգին ընդլայնելու Անապատական միայնակեցոթյունը կրադրի պարզապես ճգնավորի կյանք մը ըլլալի, ու կրառնա առիթ պրտումներու և վերծանությանց, բնագանցական որոնումներու և խոկումներու ինչպես նախորդ դարերը, ժ դարը ևս կունենա իր կարկառուն դեմքերը, թեև համեմատաբար քիչ թիվով. Ան հայ մատենագործության կուտա Անանիա նարեկացիի և հուրով Անձեացիի նման հմուտ հոգառականներ և արժեքավոր պատմիշներ աւ, ինչպես Ուխտանես և Ստեփանոս Ասողիկի Բայց այդ դարը պիտի շողար մեր մշակույթի պատմության մեջ շնորհիվ նարեկի մեծ վանականին, և պիտի ստեղծեր ուշագրավ հանգրվան մը այդ պատմության մեջ:

Մինչև այդ դարը նարեկ աննշան գյուղ մըն էր Վանա ծովուն հարավը, և աննշան ալ կմնար, եթե հոն չգար վանք մը հիմնել ժ դարուն ակիզրը Անանիան, որ նարեկացիին մոտիկ ազգական էր, և եթե այդ վանքը կրթական վառարան մը շդառնար շուտով, Բայց ան պատմության պիտի անցներ շնորհիվ այն համեստ վանականին, որ պիտի գար սքեմ առնել հոն և դարուն փառք քառնալ:

Գրիգոր նարեկացին էր ան, զավակը բազմամուտ հոգառականի մը՝ Անձեացյաց Խոսրով եպիսկոպոսին, և ծնած էր 951-ին: Մեծցած իր հոր անմիջական շունչին ներքեւ, բայց ուժացած Անանիայի նման գիտնականի մը հոգածության տակ. Գրիգոր ինքն ալ պիտի օժաներ իր միտքը շուտով բացառիկ հմտությամբ մը, պիտի բռնկեր ստեղծագործության անսպառ Քափով, ու պիտի նոր ուղի բանար հայ մտածման մեջ, նոր հորիզոններու տանելով հայ հոգին ու իր հուզումները:

Ոչ իսկ վաթսուն տարի ապրեցավ ան Բայց այդ վաթսուն տարին բավական եղավ, որ անկորնելի երկեր կտակե հայ քարեանության: Իր անդրանիկ երկն է «Երգ Երգոց»-ի «Մեկնութիւն»-ը, հետո կուպան իր «Ներըող»-ները, որոնք շորս են թիվով, իր երեք «Գտանձ»-երը և տաղերու շարք մը, որոնց մեջ բանաստեղծական այնպիսի գոհարներ կան, որոնք զայն արժանի կը նեն հայ տաղասացներուն գրովն անցնելու:

Նարեկացիի գուլս-գործոցը սակայն իր Ալորամատյանն է, իր «Նարեկ»-ը, ինչպես պիտի անվանվեր ան հնատագային:

Բայց նարեկը աղոթամատյան մը չէ միայն, Կախալին ու պիտի ախալին քոլոր անոնք, որ զայն կարծած են հասարակ աղոթագիրք մը: Իր ձևովը ուստի խորերեն խոսք մըն է ան Աստուծո հետո, բայց իր

խորքին մեջ հնոց մըն է հոգեկան ռարդ խոռվներու, կաթսա մը մարդկային բոլոր հոգմունքներուն, որոնք կեռան անդադար ու կաշխատին ժայթքիլ դուրս: Աղոթքը պարովակ մըն է հոն մարդկային հոգին արշարելու, որպեսզի իր բովանդակ հրայր-քը պողթկա: Աղոթքը առիթ մըն է: Հոն հորհուրդի ու խորհրդավորության մեջ թաթախելու մարդկային զաքսումները, ու զանոնք ցայտելու կրակե ջրվեժի մը պես: Նարեկով միստիկականության շրջանը կրացվեր հայ գրականության մեջ: Հանքանմիջապես, թե հայ հոգին իր խորքին մեջ միատիկ երթեք եղած չէ: Արև կա հայ հոգիին ու անոր բոլոր ստեղծագործությանը մեջ:

Միստիկականությունը բացառիկ պահերու միայն սպրդած է հայ հոգին ներս. որպեսզի խորհրդավորության մեջ սքողի ինչ որ պիտի չկարենար առվորդական բառերով ըսել:

Միստիկականությունը բացառիկ պահերու միայն սպրդած է հայ հոգին ներս. որպեսզի խորհրդավորության մեջ սքողի ինչ որ պիտի չկարենար առվորդական բառերով ըսել:

Նարեկացին իր աղոթքներուն մեջ հեռու է հավատքի ծամֆմլած բանաձևերներ: Աստվածաբանական բոյոր մարդանքները տեղ շունին բնավ անոնց մեջ, որովհետև նարեկացին Գերագույն էակը ըմբռնելու և անոր մերձենալու իր հասուց կերպը ունի Ստորոգելիներու հեղեղի մը մեջ, որ նարեկը կողողե, կտեսանենք տարբեր Աստված մը, քան ինչ որ երևակայեր էին մարդիկ մինչն իր օրերում, և առաքեր ալ մարդ մը, որ կրնա այդպիս համարձակ իտուի իր Աստուծուն հետո:

Նարեկացիի կապը իր ժամանակի աղանդներուն հետ քննության առարկա եղած է հաճախի և ոմանք աղանդի մը արձագանքը փորձած են նշմարել իր Աղոթքամատյանին մեջ: Ուրիշներ զայն նկատած են իրեք աղանդավոր մը, որ դարձի կուբա, և որ ինքն իսկ հետո զայն վճարեկի, Կարելի չէ որոշ ըսել, թե ո՞րն է ճիշտը այս տեսություններներն: Ստույդ է սակայն, որ անոր հավատքին մեջ տարբեր շունչ մը կա, շըղթաներ շունի իր հոգին իր Աստուծուն աղոթքած ատեն, ինչպես երբ կզննե մարդը իր ներքին փոթորիկներուն մեջ:

Նարեկը աղոթքամատյան մըն է, ուր սակայն կապանք շունի աղոթող մարդը իր հոգին պարպած ատեն, Ան կժայթք ինչ որ

կա ներսը, ցավոտ փոթորկի մը պես, Եվ ան վեր է բոլոր նախապաշտումներն ալ, երբ բոր կմերձենա աշխարհիկ իրերուն, իր սքեմը չի կաշկանդեր իր հոգին, երբ կփորձե մարդուն մեջ որոնել մարդը, ինչպես որ ան կա:

Աստվածածինը, օրինակ, իր հատուկ տեղն ունի նարեկի մեջ, ինչպես ունեցած է մեր հոգւոր բանաստեղծներն շատերուն երկերուն ու երգերուն մեջ ալ, Բայց տարրեր է նարեկի վանականին երևակայության հաճախող Աստվածածինը. ան մարմն է, որուն գուրգուրանքին պետք է դիմել Աստուծո մոտեցած ատեն, բայց նաև կինը, որուն գեղեցկությամբը բանված է ան,

Բարիեխոսություն մը աղերսելե տարբեր րան մը կա պաղատանքին մեջ, որով նարեկացի մը կիսուի Աստվածածին հետ. Զգուշանա՞նք այդ պաղատանքը մեկնել.

Այսի հաջողինք անոր թափանցել, ի՞նչ կմնա քեզ «Երգ երգոց»-են, եթե փորձես մեկնելու անոր ամեն մեկ բառը. Արվեստի Հրաշակերտները հանդիսատ թուունք իրենց գեղեցկության մեջ:

Հսենք վերջապես, թե անձնական հուգուներու երևութին տակ, նարեկացին մարդկային հոգին է որ կպեղի, Անոր աղոթքներուն մեջ ոչինչ կա խորթ մարդկային հոգվույն: Մարզն է, որ իր մեջ կերպարանք կառնի իր բովանդակ կիրքերով և խորվներով, իր միտքը բարձունք տանելու և իր հոգին ազատագրելու ամբողջ ճիգով:

Մարդկային՝ իր խորքին մեջ, նարեկը հայ ժողովուրդի ստեղծագործությունն է սակայն: Անոր հոգին է, որ կցոլանա մեն-մի էշի մեջ, իզուր չէր հետևաբար, եթե հայ ժողովուրդը անոր պաշտամունքը ստեղծեց: Ան նարեկացիի աղոթքներուն մեջ իր սեփական հոգին գտավ, և կարծեց, թե ինքն է, որ կադոթե անոնց հետ Ու դարը, ուր նարեկացին ապրեցավ, կշնչ անոր էշերուն մեջ, իր ամբողջ խոռվքով ու խորումներով:

Շատերը փորձեցին օտար ազգեցություններ տեսնել նարեկացիի երկին ու արվեստին մեջ, Ազգեցություն ո՞վ չի կրեր որ նարեկացին ալ անշուշտ կրած է: Այդ աղեցությունը խորքին հետ կապ շունի սակայն: Իսկ պետք է շատ շարշարվիլ՝ օտար հետքեր գտնելու համար իր արվեստին մեջ:

Թե արաբական մտքին ազգեցությունը այնքան զորեղ էր Հայաստանի մեջ, որ կըրցած էր շեշտ դնել հայ մշակույթի վրա, եռ շատ վիճելի հարց է: Արդարե, ու մեկ փաստ կա, թե արաբական տիրապետության հետ արաբ մշակույթն ալ թափանցած րլա Հայաստան, Եվ առավելապես որեւ Հարավորություն շունինք, թե նարեկացին

ազդված է այդ որևէ մշակույթեն, թող մեզ լցփոթեցնե ածականներու և հոմանիշներու հեղեղը, որ հատկանիշն է արաբ բնագիրներուն, և որ կողողի նաև մեր նարեկացին: Մեր հին դասականներն ալ վարակված էին արևելյան այդ նախամիրությամբ, արաբներն շատ առաջ: Նարեկացին զայն արդեն իր ոճին հատկանիշը դարձուց:

Թող ոչ ոք շրմե, թե ժողովուրդը պաշտամունքի կստեղծե տեղի-անտեղի: Եթե ան պաշտամունքի առարկա դարձուց նարեկն ու նարեկացին, անոր համար էր, որ իր իսկ հուզումներուն արձագանքը լսեց նարեկի ողբերուն մեջ, իր սրտին հարազատ տրուիլունը անոր մեն-մի տողին մեջ:

Նարեկը հայ հոգին է, իր խորքին ու իր ոճին մեջ:

2. ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ԻՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Ամբողջ տասը դար նարեկը խորհրդավոր մատյան մը մնաց: Հայ ժողովուրդը պետք շուներ սակայն, որ զայն իրեն մեկնեն: Իր հոգին կը մրցչիներ զայն լրիվ:

Եվ սակայն փորձեր եղան նարեկը քըննելու իր խորհրդավոր ծալքերուն մեջ, ուրովհետև այսպես կամ այնպես նարեկը մութ անկյուններ շատ ուներ պարզ հոգին համար:

Նարեկի մեկնություններ կվերագրվին, օրինակ, Առաքել Սյունեցիի, Գրիգոր Տաթևացիի, Սարգիս Շնորհալիի և ներսես Լամբրոնացիի, թեև ասոնց վերագրված մեկնություններն որևէ մեկը չէ հասած մեղի: Խակ վերջին երկու հեղինակներուն վերագրված ուղածմունքը մը, որ մեջ հասած է, կենթադրվի, թե գործն է ժող դարուն ապրած կիլիկյան գրչի մը:

Առաջինը, որ նարեկի մեկնությունը գրեց, Հակոբ Նալյան պատրիարքն էր, մեկը Հայ Եկեղեցվո ամենեն հմուտ և ամենեն բեղմավոր դեմքերեն: Առաջին փորձն էր այդ պարզելու բարդ հոգին, որով նարեկացի կիստանա իր նարեկին մեջ, և խորհուրդը, որով սպողված են իր աղոթքներու «Հոգվով» և հմտությամբ գրված ընդարձակ և կարևոր գործ մը, — կըսե թորգում արքեպիսկոպոս Գուշակյան նարեկի թարգմանության իր վերջարանի մեջ, — որուն ընթերցումը դժվարացնող միակ բանն է շառայլաբան ոճը»:

Նալյան պատրիարքեն ավելի քան կես դար հետո, նարեկի նոր մեկնություն մը գրեց Հ.

1 «Գիրք մեկնութեան Սրբոյն Գրիգորի նարեկացոյ նեշտակական վարդապետին... շարադրեալ և մեջ: նեալ մեծաւ զգուշութեամբ և շրջահայեցութեամբ ի Յակոբայ արքեպիսկոպոսէ և պատրիարքէ Կոստանդնուպոլու Աստուծածարան կոչեցելոյ», Կ, Պոլիս, 1745, 1130^o էլ:

Գաբրիել Ավետիքյանը, Վենետիկի Մխիթարյանց ամենեն բազմարդյուն դեմքերեն մեկը, որ նարեկացին զննեց ավելի ու ավելի խորունկեն², և որուն գործը, ինչպես կըս թորում սրբազն, ավելի տանելի էր ոճի տեսակետով:

Ուշագրավ է, որ նարեկի զուգ թարգմանիչները՝ թորում գուշականն ու Գարեգին Տրավրիզնցին, իրարմե անկախաբար, դիմած են նաև անկախանության Ավետիքյանի մեկնությանց, ավելի լավ թափանցելու համար խրթնաբանությանց իմաստին, որոնց մով լի է անշուշտ նարեկը, երբ մանավանդ զայն թարգմանել կփորձես:

Երբոր անով կաղոթես, խրթին չի թվիր անքեզի. ավելին՝ հաճելի է կարծես քեզ իր խրթնությունը. խրթին չի թվիր քեզի, երբոր հրաշք կաղերսես անկե. առանց իր խրթնության, կարծես պիտի շաբ հրաշքը:

Եվ այնուամենայնիվ ժողովուրդը միշտ աղոթեց անով, անկե միշտ հրաշք սպասեց:

Որպեսզի ժողովուրդ մը հրաշագործ սեպեր աղոթիք գիրք մը, պետք էր շափազանց սիրած ըլլար զայն ու շափազանց գեղեցկություն գտած ըլլար անոր մեջ. Բայց մանավանդ պետք էր անոր հրաշագործ ուժին հավատար:

Հայ ժողովուրդը հավատաց նարեկի ուժին, ու նարեկացին անցուց սուրբերուն դասը:

Նարեկացիի պաշտամունքը այդ ձևով սկսած է: Ան ուղղված է հրաշքի մարդուն:



Նոր օրերու պետք էր գալ, որպեսզի մարդիկ զգային, թե աղոթիք սովորական մատյան մը չէ նարեկը, թե անոր խորքին մեջ ուրիշ՝ աշխարհ մը կա:

Մեր օրերուն, Արշակ Չոպանյան առաջինն եղավ, որ փորձեց աղոթքներուն խորն իշնել: Իր զույգ մը հողվածներով, որոնք լուս տեսան 1895-ին իր «Շաղիկ»-ին մեջ³, և որոնց մեջ նարեկացին կուտումասիրեր այնքան աղապատանքով, կստեղծեր նաև նարեկացիի պաշտամունքը մեր նոր սերունդին մեջ:

Չոպանյան, երիտասարդ օրերուն, կդրեք. «Դեմք մը կա սակայն մեր գրականության մեջ, թերևս միակը, որ զուտ միստիկական է, և մեկը՝ ամենեն հրաշալի դեմքերեն ընդ-

² «Նարեկ»-ուժ. Նարեկ աղօթից հարազատ և զգուշաւոր լուծմամբք բացայալուալ, ի նպաստ բանասէր աղօթաւորց. Ընդ նմին առանձին բացախօսութիւն ի հաստուած ինչ «Գումարք» խմբից ներբողին Սրբունու Աստուածածնին: Վենետիկ, 1801, Ժ 2—788 էջ:

³ «Շաղիկ», աղջային գրական և քաղաքական կիսամյա հանդես, խմբագրապետ՝ Արշակ Չոպանյան, Կ, Պոլիս, 1895, էջ 129—135 և 170—189.

հանուր միստիկական գրականության: Նարեկացին է ան»⁴:

«Հպարտությամբ, ուրախությամբ և հիացմամբ, ողջունենք զանիկա: Մեր գրականության տիտանը, մեր ցեղին է՛ն ուժով արտահայտությունն է ան: Հանենք զանիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր, և զննենք իր տեղը, գրական մեծ հանճարուներուն օդակարկառ բարձունքին մեջ: Ա՛լ լուսնեք, որ մեր բանաստեղծությունը հսկա չունի: Հոմերոսին ու Աստվածաշունչին հսկու հետ, մեր տղոցը ձեռքը տանք զայն և սորվեցնենք անոնց սքանչանալ այդ մեծության վրա. ըսենք անոնց, որ այդ հոգին՝ հանելով զայն միստիկական կաղապարեն, իր իսկության մեջ նկատելով, մեր ցեղին հոգին իսկ է, խանդի, քնարերգության, ուժեղ ստեղծման և արվեստագետ զգայնության հոգի մը:

Մեր մեծ մարդն է ան: Անկից առաջ, անկից հետո, ոչ մեկը ունինք անոր հետո եկեղեցական բանաստեղծությունը քանի մը անգամ մինչև կմեմը կարծրանա, բայց հեռու է նարեկացիին ուն ունենալին⁵:

Չոպանյան իր այդ հողվածներուն մեջ կմատնանշեր աղդեցությունը, զոր նարեկացիին կրած են անցյալ դարու մեր գրական փառքերին ունանք, գոնե իրենց ոճի մեջ. և Այդ ոճը մեր դարուն մեջ նմանողությամբ մը՝ մասսամբ կրկնվեցավ. Աւոնդ Ալիշանի «Ընդ եղեկեաւ»-ին և քանի մը գրաբար բանաստեղծությանց մեջ նարեկացիին ոճին ցոլքը կա. Եղիա Տեմիրճիպաշյան իր փեկարան արձակի հաջողած կտորներուն՝ ինչպես «Մոնազ»-ին մեջ, նոր ժամանակներու նարեկացիի ոճ մը գտավ. և շեք քարծեր, որ հուզման, տառապանքի և ծայրահեղ քնարերգության շեշտով տեսակ մը հեռավոր եղբայրություն կա մեր նոր մեծ բանաստեղծ Պետրոս Դուրյանին և մեր հին բանաստեղծին՝ նարեկացիին մեջ⁶:

Այդ հողվածները գրված միջոցին դեռ հասունցած չէր այն մյուս սերունդը, որ մեր գրականությունը պիտի գաղ պճներ անկորնելի նոր գոհարներով: Ու Չոպանյան չէր կրնար գիտնալ, որ նարեկը այդ սերունդը ևս պիտի հմայեր:

Նարեկը սնարի գիրքն էր Միսակ Մհամբենցին: Ու ի՞նչ ավելի խոր արտահայտություն պաշտամունքի, քան այն արձակ կտորը, զոր նվիրեց նարեկացիին, «Նարեկացիին հետ» խորագրին ներքս, և ուր կըս:

⁴ Անդ, էջ 129:

⁵ Անդ, էջ 188:

⁶ Անդ, էջ 188—189.

«...Նարեկացին է, սրբության իղձին կրակով վառված անշեց մորենին...

...Նարեկը ալեկոծություն մըն է, հոգեկան վրդով մըրիկ մը...

...Բայց բոլոր այս խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հորձանքներուն ետին, հավիտենական, երջանիկ, անշիշանելի գաղափարը կա պահված. և կուգակամքի ու գիտակցության արևոտ այն վայրկանն ալ՝ ուր երջանիկ ձայնարձակությունը կլավի. «Տօնեա զկեալս կորուսելոյս վերեականացն պարերգութեամբ»⁷:

Թեքեյանին համար՝ մեծ հոգին է նարեկացին.

«Ո՞վ դուն, կոշո՞ւմք. զուն կը մըխաս տակավին՝ իբրև կաթսա մը պըղինձ, ուր կեռա միտքն Եղնիկին, իբրև շամփուր մուր կալրի նարեկացվո մեծ հոգին, իբր խնկաման մորուն մեջ սի՞րտն է, դըրեր Շնորհալին...»⁸:

Նարեկացիի պաշտամունքը Զարենցն ալ ուներ Արդարե, ի՞նչ խորունկ իմաստ միակ տողի մեջ.

«Նարեկացու, Քուշակի պես լուսապսակ նակատ չկա»:

Սիամանթոն միակը եղավ սակայն մեր օրերու հայ քերթողներեն, որ կրցավ մերձենալ նարեկացիին: Տարրեր էին իրենց դարերը, տարրեր էին և իրենց հոգեկան հուզումները, բայց մարդկային հոգին միշտ բացառիկ ճիկ մը կընե, բացառիկ իր խոռվեները պոռթկալու համար: Կուգա պահ մը, երրոր հայ լեզուն տկար կմնա ներքին փոթորիկը ժայթքելու համար, ու բառերը անզոր կդառնան մտածումի, երևակայության, ցասումի հեղեղը թուղթին հանձնելու ատեն: Սիամանթոն ևս հայ լեզվին շղթաները փշրեց հաճախի, ինչպես ըրեր էր նարեկացին, բառերուն նոր իմաստ տկավ, ու իմաստներուն նոր բառեր, որպեսզի իր հոգին պարապել կարենա:

«Սուրբ Մեսրոպ»-ի մեջ Սիամանթոն նոր օրերու նարեկացին է արդեն: Հայ լեզուն նոր թափ կտանա, բառերը նոր ուժ կզգենուն, որպեսզի պատմեն հրաշալի այն պահը, երբ Մեսրոպ Մաշտոցը տառեր կուտար հայ լեզվին, որպեսզի կարենար ան արշավել դարերու մեջին:

Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» պոեմի մասին էր, որ կգրեր Վարուժան:

⁷ Վելուսա շարաթաթերթ, Կ. Պոլիս, 1908, թիվ 4:

⁸ Վահան Թեմեյան, «Տաղ գրաբարին», «Մեր», 1933, էջ 48:

«Տառերու գյուտին [հորելլանին] առթիվ գրված պրակ մը՝ որ պիտի կարծվեր նարեկի մատյանեն փրթած, նոր գրականության ցոլերով վրա՝ խանդակառության այս օրերուն: Մեկ շունչով երգված կթվի ան. քիչ մը աճապարանք կա իր կշուռակին մեջ:

Սիամանթո վերադիրներու գրիչ մըն է, ինչպես իր վարպետը՝ նարեկացին. և այս քերթվածին մեջ իր վերադիրներուն մեկ մասս միշին դարու միստիկականները մաշած են արդեն, բայց կա մեծագույն մաս մը, որ գյուտերու շարք մըն է: Սիամանթոն վրեմի մարտագոռ շեփորողը և տառապանքի խելահեղ բանդագուշողը չէ՝ անոր մեջ. մեզի կապացուցանե, թե գիտե նաև աստվածաբանի մը պես աղոթել Սուրբ Մեսրոպին հետո:

...Սիամանթո իր այս քերթվածին մեջ տվակ իրեն համար նոր ձեւ քերթելու, որ իր մյուս երկերուն մեջ հաղիկ կուրվագծվեր. այս՝ զինքը նարեկացիին հետ կապող թելն էր՝ զոր ամրակուր շղթայի մը վերածեց»⁹,

Տարակույս չկա, որ նարեկը իր հետքը ձգած է մեր հին ու նոր բանաստեղծներեն շատերուն ստեղծագործության վրա, եթե ոչ միստիկ իր բովանդակությամբ, գոնե իր արվեստովը:

Նմանաձայնությունները, զորս նարեկացին գործածած է առավելապես իր տաղերուն մեջ, փորձած են շատեր ալ մեր օրերուն:

Բառերու հեղեղը ևս, որով կհորդին նարեկի հատվածները, կտեսնենք մեր օրերուն ալ շատ մը բանաստեղծներու մոտ:

Բարձր բոլորեն, բայց իր հոգին նարեկացին բաշխած է բոլորին:

3. ՕՏԱՐԵԼ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Օտարը, երկար ատեն, անհաղորդ մնաց նարեկացիին:

Առաջին փորձը նարեկացին օտարին ծանոթացնելու դարձյալ Զոպանյանն ըրավ, Ուսումնասիրությունը, զոր 1895-ին լուս ընծայեց Կոստանդնովուլուս «Մաղիկ»-ի մեջ նարեկացիի մասին, թարգմանաբար լուս տհասակ նաև Փարիզ, «Մերկյուր դը Ֆրանս»-ի մեջ: Ուսումնասիրության կցված էին քանի մը հատվածներ ալ նարեկեն¹⁰:

Աղեք հետո ոչ մեկը քաջություն շունեցավ աշխարհին ներկայացնելու ինչ որ դարբերը մեզ րերեր էին, որպեսզի հպարտությամբ ներկայանանք աշխարհին:

⁹ Դանիել Վարուժան և Հ. Ճ. Սիրուեն, «Նաւասարդ տարեգիրք», Կ. Պոլիս, 1914, էջ 254:

¹⁰ Արշակ Չոպանյան, «Ուսումնասիրություն Դրիգոր նարեկացիի մասին», «Մերկյուր դը Ֆրանս», Փարիզ, 1900, նոյեմբեր (ֆրանսերեն):

Պետք է անցներ ավելի քան կես դար, որպեսզի Նարեկացին անգամ մը ևս երևար ծվրոպային, բայց այս անգամ արդեն օտարի ձեռքով:

Հայ հոգեկան գեղեցկությանց խորքին թափանցած օտարներուն մեջ բացառիկ տեղ պետք է տալ Վալերի Բրյուսովին, որ հայ բանաստեղծությունը կրցավ զննել ու ճանշնալ իր իսկական արժեքին մեջ ու ոռւս լեզվին վերածեց շատերը հայ քնարի գոհարներն, որոնց մեջ թարգմանությունը կլրցի հաճախ բնագրին հետ, և տեղ-տեղ նույնիսկ կգերազանց զայն իր գեղեցկությամբ:

Վալերի Բրյուսով «Հայ բանաստեղծության» հառաջարանին մեջ, հայ քերթողության դարավոր հանդրվանները վերըուժելու առթիվ, պահ մը կանգ կառնե Նարեկացիին հասած ատեն.

«Գրիգոր Նարեկացիի քերթվածներուն մեջ կրոնական զգացումը կմիանա իսկական բանաստեղծական ավլունի հետ, անոր շատ մը այլարանական ներռողները կմնան միշտ գեղցիկ, անկախ անոնց աստվածաբանական մեկնություններնեւ Ասկե զատ, Գրիգոր Նարեկացին ոտանավորներու ձեր հասցուց բարձրագույն կատարելության մը, մշակելով նաև բառախաղերը պարսկական և արարական քնարերգության մեջ ծաղկելե շատ առաջ Այս տեսակետով Գրիգոր Նարեկացիի ոտանավորները նախակարապետ Կհանդիսան միջնադարյան «աշխարհիկ» բանաստեղծության»:

Վալերի Բրյուսովի կողքին հուգա ահա կանգնի լուկ Անդրե Մարսել ֆրանսացի բանաստեղծը, որ տասնյակ մը տարին ի վեր կուսումնասիրե հայ բանաստեղծությունը, հինն ու նորը: Արդեն իր զննության բովեն անցուց ան մեր հին տաղասացներեն և աշուղներեն ոմանք, ինչպես Գրիգորիս Աղթամարցին, նահապետ Քուչակը, նաղաշ Հովնաթանը և Սայաթ-Նովան, քանի մը գոհարներ հայ ժողովրդական բանաստեղծութենեն, և քանի մը նոր դեմքեր ալ, ինչպես Պետրոս Դուրյանը, Վարուժանը, Մեծարենցը, Զարենցը, բնորոշելով զանոնք իրենց գրական դիմագծությանը մեջ և նմուշներ տալով անոնց երկերեն:

Բայց հայ հոգվուլն հետ իր կապը ան կանացնե Նարեկի մասին իր ուսումնասիրությամբ և անկէ կատարած իր թարգմանություններով¹¹: Օտարներեն շատ քիչեր կըրցած են հայ հոգիին հետ այնքան նույնանալ, որքան ֆրանսացի երիտասարդ բանաստեղծը, և այնքան շերմությամբ ու հավատար-

11 Լուկ Անդրե Մարսել, «Գրիգոր Նարեկացին և հայ հին բանաստեղծությունը», Փարիզ, 1954 (ֆրանսերեն):

մությամբ հայ հոգեկան գանձը պատմել իրենց ժողովուրդին:

Լուկ Անդրե Մարսել տասնյակ մը էջերու մեջ Նարեկացին ու իր երկը կվերլուծե այնպիսի խորաթափանց մտերմությամբ մը, որ զարմանք և միևնույն ատեն սքանչացում կպատճառե մարդու:

4. ՆԱՐԵԿԱՅԻՆ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԵՋ

Ու հիմա, որ բոլոր մեր հին արժեքները անգամ մը ևս նժարը կդրվին, Նարեկացին ևս անցավ զննության բովեն: Նարեկը, մեր հին ու նոր արժեքներու կողքին, իր արժանի պանծացումը գաավ վերցերս Սովետական Հայաստանի մեջ, ըլլա գրականության դասագրերու միջոցավ, ըլլա առանձին մենագրությամբ¹²,

Մանուկ Արեյյան առաջինը կըլլար, որ Նարեկացիին նոր օրերու պաշտամունքը կատեղծեր Վաթունի մոտ էջերը, զորս անհատկացուց Նարեկացիին իր գրականության պատմության մեջ, փաստն են այն հիացման, զոր ան կտածեր մեր առաջին մեծ բանաստեղծա-ին հանդեպ, որուն Նարեկը մեր բանաստեղծության առաջին մեծ հրաշակերտությունը լինելով՝ ոչ միայն հրաշալիք է երևացել մեր ժողովրդի աշքին, այլ մի սրբություն հրաշագործ զորությամբ¹³:

Ավելի հետո պրոֆ. Մ. Մկրյանն էր, որ բացառիկ ուշագրություն դարձուց գրական տիտանի մը, որ կրնա հպարտ անցնիլ բոլոր դարերուն մեջեն, արհամարհել սերունդներու վաղանցուկ կուտքերը և տոկալ ամենեն խըստարիք զննությանց, մեր օրերուն ալ:

Պրոֆ. Մ. Մկրյան, որ հայ գրականության պատմության դասագրքին մեջ ինքն իսկ խմբագրած էր շրջանը, որուն կպատկաներ Նարեկացին, կգրեր. «Ողբերգության մատյան պեմը մեր գրականության մեջ նշանագոր է նաև նրանով, որ առաջին անգամ մեծ խորությամբ վեր է հանդում մարդկային ներքինը, ուշագրություն է դարձվում և արժեքագրովում են մարդկային անձնական ապրումները»¹⁴:

Ավելի հետո էր, որ ան մասնավոր ուսումնասիրության նյութ դարձուց Նարեկացին, արժեքավոր մենագրության մեջ, ուր գորգուրանքն ու պաշտամունքը հաշտ կընթանական խղճմատության հետ¹⁵,

12 Զենք տեսեր Մկրյանի Խերանյանի նոր թարգմանությունը արևելահայ լեզվով, լուս տեսած Երևան, 1960 թվականին:

13 Մ. Արեյյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ա, Երևան, 1944, էջ 559,

14 Մ. Մկրյան, «Հայ գրականության պատմություն», Ա, Երևան, 1951, էջ 134:

15 Մ. Մկրյան, «Գրիգոր Նարեկացի», Երևան, 1955,

Խոսելով նախ Նարեկացիի բնարական էշերուն մասին, պրոֆ. Մ. Մկրտչյանը կեղակացնե, ունարեկացին հայ գրականության պատմության մեջ նոր դարագլուխ է բաց անում իր տաղերով ու Ողբերգության մատյան լիրիկական պիոնով: Նա առաջինն է մեր մեծ բանաստեղծներից, որ գրականության մեջ լիրիկայի ժամբը ազատեց եկեղեցուց ունեցած ենթակարացնական կախումից և խիզախնեց այն պատկերացնել անկախ արարողություններից՝ իր ինքնուրույն արժեքով ու նպատակներով: Նարեկացու աշղերից լավագույնները թե՛ իրենց իդեական բովանդակությամբ և թե՛ պոետիկական մշակութով հայ գրականության մեջ վերածնության սկզբանվորումը նշող՝ լիրիկայի առաջին փայլուն նմուշներն են»¹⁶:

Նարեկացիի միստիկականության մեջ պրոֆ. Մկրտչյան կամ նե շուրջի կանքեն դրժգո՞ն մարդու մը հոգեկան խոռովը՝ քնարերգական էշերուն մեջ պողոթկացած¹⁷:

Պրոֆ. Մկրտչյան համաձայն է, որ Նարեկը սովորական աղոթամատյան մը չէ, ինչպես տիտղոսած են զայն, այլ աղոթքի ձևին տակ բողոքի ժայթքում մը ընդդեմ տիրող կարգերուն¹⁸:

Պրոֆ. Մկրտչյան զերծ կգտնե նույնպես Նարեկացին իր սքեմին կաշշանդումներեն և կը դուռի, որ Աստվածածինը ներրողած ատեն անոր հոգին ալլես կապանք չունի¹⁹:

Պրոֆ. Մկրտչյան չի վախնար փոքրիկ ժողովորդի մը այս մեծ հանճարը համեմատության դնելի օտար մեծ մտքերուն հետ. «Նարեկացին բնությունից վերցված որևէ տեսարան մեծ մասամբ օգտագործում է ուղղակի և անմիջապես հասկանալի կերպով, տվյալ խոհը կամ հույզը համեմատությամբ կամ փոխարերությամբ պատկերավորելու և ցուցադրելու նպատակով: Այսպիսով՝ նա շնայտ երեք դար առաջ է Դանթեից, բայց այս առումով էլ նրանից շատ ավելի մոտ է նոր ժամանակի բանաստեղծներին. Հայտնի բան է, թե դժվարը մրոնելի ալեկորիխաները որքան մեծ տեղ են բռնում Դանթեի ստեղծագործության մեջ»²⁰:

Դանթեն հետո Նարեկացին կրազդատե քրիստոնյա Արևմուտքին մեծ հոչակով մարդոց հետ ևս. «Նարեկի գեղարվեստական արժանիքները այնքան մեծ ու շատ են, որ եթե օրինակ՝ Թովմա Գեղարիխացու այնքան գովարանքած և հոչակ վայելող ուշամահետնում Քրիստոսի» գիրքը դրվի նրա կող-

¹⁶ Մ. Մկրտչյան, «Գրիգոր Նարեկացի», էջ 140.

¹⁷ Անդ, էջ 193—194.

¹⁸ Անդ, էջ 80.

¹⁹ Անդ, էջ 137.

²⁰ Անդ, էջ 216.

քին, իր մտահղացմամբ ու արվեստով պիտի թվա մի շատ գորշ ու թույլ լիրիկական ստեղծագործություն:

Մեր գրականության վերածնության շրջանը սկզբնավորող մեծ բանաստեղծի Մատյան ողբերգության պոեմը, անշուշտ, մարդկային ստեղծագործական մեծագործության գանձերից մեկն է»²¹:

Նարեկացիով կզբաղի նաև պրոֆ. Առաքել Գ. Առաքելյանը: Հայ ժողովուրդի մտավոր մշակութի զարգացման պատմության նվիրված իր ծավալուն երկին մեջ, քննության կառն նաև Նարեկացին, և կըս ի միջի այլոց. «Բանաստեղծը վառ պատկերներով, գեղեցիկ ու ճոխ լեզվով արտահայտում է իր զգացմունքները, տրամադրությունները, խոհերը, բողոքը, որոնք ըստ էության ուղղված են իր ժամանակի ըմբռնումների և հասարակական ճնշիչ մթնոլորտի դեմ: Այդ զգացմունքները հախուռն են, հորդաբուխ, սրտահույզ: ...Փիլիսոփայական այս զարաշրջան կազմող երկի մեջ երկում են կրիտիցիզմի առաջին ցոլքերը. Նա խարազանում է և՛ իրեն և՛ իր ժամանակը»²²:

5. ԱՐՄԱՆ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Արմաշ չէր կրնար չստեղծել Նարեկացիով խանդավառողներու սերունդ մը: Հազիկ քառորդ դար տրվեցավ անոր շնչել հոգեկան ոգերության շրջանը, բայց այդ քառորդ դարը բավական եղավ, որ հասնի սերունդ մը, որ գուրգուրանքով պրատե հայ ժողովուրդի հոգերը գանձը և զայն զննե նոր օրերու հոգերանությամբ:

Նարեկացիի մասին իրենց սքանչացման խոսքն ունեցան, նախ, Արմաշի զույգ դաստիարակները իրենք՝ Օրմանյան և Դուրյան:

Օրմանյան իր «Ազգապատում»-ին մեջ, ինչպես և հավանաբար իր դասերուն, շատ հարևանցի անցած է, իր նպատակը ըըլլալով գրական վերլուծման մը ենթարկել Նարեկացին ու իր երկերը, վերաբերում, զոր այն ցուց կուտա առհասարակ գրական հին արժեքներու հանդեպ, իր մտահղացման դուրս նկատելով զանոնք:

«Մքանչելի աղոթագիրքը... եթե մեկ կողմեն յուր քերթողական ավյունին, գրական հաջողության և բարեպաշտ զգացմանց միությունը հասաւատե, — կըս Օրմանյան Նարեկացիի մասին խոսելու ատեն, — մյուս կողմեն կցուցնե այն սրբության և կարողության համբավը, զոր կվայելեր Գրիգոր, Նարեկա վանքին համեստ վանականը: Մեր

²¹ Անդ, էջ 245.

²² Պրոֆ.-դոկտ. Առաքել Գ. Առաքելյան, «Հայ ժողովուրդի մտավոր մշակութի զարգացման պատմություն», Երևան, 1959, էջ 319:

նպատակեն դուրս է նարեկ գիրքին առավելությունները վերլուծել, բայց իրեւ պատմագիր բավական կսեպենք հիշել տալ, թե ազգին մեջ գրեթե Սուրբ Գիրքին համաձավասար պատիվ ընծայված է այդ գիրքին, և սքանչելագործ հատուկ զորություններ կվերաբովին անոր մեն մի տողին: Այդ աղոթագիրքն եղած է նաև մեծ փաստը, որ Գրիգորին առաքինազարդ կյանքը ցուցացնելով, անոր անոնք տոնելի սուրբերու կարգը անցուցած է»²³:

Տարօրինակ է սակայն Դուրյանը իր դատումներուն մեջ, Հիմացո՞ւմ. հարկավ ան ալ ունի նարեկացիի մասին. բայց որքա՞ն վերապահում նարեկի արժեքը ընդգծած ատեն:

Հայ մատենագրության պատմության սկիրզած իր երկասիրության մեջ, ուր կիստանան Արմաշի և հետո Երուաղեմի մեջ իր ըրած դասախոսությունները և որ լուս տեսավ հետմահու, ան արդարք կըսե.

«95 Կտորների բաղկացած այդ աղոթքները կամ ապաշխարողի ողբերը թարգման կանդիսանան ինկած ու անմաքուր հոգիններու կսկիծին ու մեծերուն, միննույն ատեն մելի ընելով նաև վերելի մը թափն ու թոփշը դեպի հավիտենական բարձրությունն ու սրբությունը: Իր մտածումները, որոնք խորհրդագույր խրթնությամբ մը կծածկվին շատ անգամ, զորկ շեն սակայն փայլակի այն շոյելուններն, որ ցավերու աշխարհի մը մութ խորությունները կլուսավորեն մերթ ընդ մերթ: Իր ոճը պահանջված հստակությունը շոնի՝ բառական բարդություններու և քերականական անճշտություններու հետևանակով: այսուամենայնիվ, իր ծանր պարբերություններուն զանգվածային այն կազմը, որ իմաստ մը փոխադրելու անհարմար պիտի ըլլար ինքնին, զորեղ շոնչի մը շարժմամբը կիթալի, իր մեջ լուծելով նաև քերականական այն անհարժությունները, որոնց համախհանդիպիսինք իր գրչին տակ, ու այդ պղտոր հոսանքին մեջին դժվար չէ ընդումարել սակայն խորտակված կիրքերու հուսահատ մաքառումը: Եթե զղացող մեղալորի մը այնքան անկեղծ խոսքերուն և զերմ հավատալիքներուն քիչ խառնվեին գրական արվեստի ճիգեր ու շափաբերական տողերու շարքեր—այս վերջիններուն շատ մտադիր է նարեկացի—թերևս ամբողջ գործը ավելի պարզ և հասկնալի ըլլալու: առավելությունը պիտի ունենար. սակայն և այնպես իր բանաստեղծական խանդը Աստուծո հետ խոսելու լեզվին կրցած է տալ նորագույն ճաշակ մը, ա-

ռանց զերծ մնալու ժամանակին զարտուղի բերումներեն²⁴:

Եվ սակայն նույն այդ Դուրյանն էր, որ իր սաներուն մեյմեկ նարեկ ընծա կըներ երբոր անոնք իրենց ընթացքը կավարտեին՝ պատվիրելով, որ չեռացնեն զայն երբեք ալքեն և մտածումն: Ընծայականը, որ իր նվերին կընկերանար, գովք մըն է մինուկը ատեն և մեծահանձար կրոնավոր»-ին. «Ի նուէր նուիրելոյդ ի սպաս պաշտաման Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեայց զմիոյ ի չնաշխարհիկ վարդապետացն մերոց զհոգեցունց մատեսան մատուցեալ՝ ցանկամ զակն ի նմա պահել քեզ, ո՛չ միայն յիմաստո յոգնաթախանձ գոյոյն, այլ և ի պատկեր անարատ ոգոյ մեծահանձար կրօնաւորին ուշ կալեալ յաէտ:

Որ գիտէ ընդ Աստուծոյ խօսել բանս համարձակութեամբ, գիտէ և մարդկան խօսել զարժանն, զպիտանին և զհաճոյն ի ժամանակի:

Իցի՝ ըստ ըղձանաց նարեկայ մեծափառ և բարձրապատի ուխտի վանականին արժանացուցչ գեեզ Հզօրն ռառնել և ուսուցանել յօրինակ բարեեց աստուածասէր լսողաց»²⁵: Պատգամ մըն էր արդեն աս իր ձեռնասուններուն համար, ու անոնք շմոցան երբեք այդ նվիրական պատգամը:

Արմաշի նոր սերունդեն Մոշեղ Սերոբյանն եղավ, որ վարդապետական իր թեզին նարեկացին նյութ ընտրեց: Դժբախտաբար տեղյակ շենք այդ ուսումնասիրության պարունակության:

Պետք էր անցներ քառորդ դար, որպեսզի երկու ուրիշ արմաշականներ, Թորգոմ արքեպիսկոպոս Գոշակյանն ու Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին, ձեռնարկեին գրեթե միևնույն ատեն նարեկի թարգմանության, ու այդ առթիվ վերլուծեին նարեկացին ու իր նարեկը:

Պետք է ըսել, թե երկուքն ալ ջերմությամբ մոտեցած են հանճարեղ մարդուն ու իր գուլի-գործոցին:



Արդարեն, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի համար ագլիավոր ու տիրական զեմքն է անիկա, որ իր հզոր ու բարի մտածումին քաղցրությամբը կիշնես իր ժամանակի մտքին վրա, ինչպես ծիրանի աղեղը՝ թոնընկեցներե այնինչ մաքրված երկնքին վրա: Խորհուրդի և զգացման բոլոր ձեերը, սիրտի և հոգիի բո-

24 Եղիշե արքեախսկոպոս Դուրյան, «Պատմություն Հայ մատենագրության», Երուաղեմ, 1933, էջ 172—173:

25 Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, հառաջարան նարեկի թարգմանության, էջ է:

23 Մաղաքիա արքեախսկոպոս Օրմանյան, «Աղդապատում» Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 1181:

լոր բերումները, խոսքի և ոճի բոլոր շեշտերն ու երանգները, որոնք հոս ու հոն, իրեն ժամանակակից այս կամ այն զպրոցին մեջ, միջավայրին իմացական ու բարոյական կյանքը կարահայտեն որոշ ինքնատպություններով, ամենքը կմիանան իր մեջ զմայ լելի ներդաշնակությամբ. իր նկարագիրը համդրդիյունն է իր դարուն ձառումներուն»²⁶:

Թորգոմ արքեպիսկոպոս Նարեկացիի երկին մեջ կդուն իմացական բոլոր տարերքը անոր դարուն. «Երկարողի ու ուշադիր վերուժում մը հաջողությամբ պիտի դուրս բերեր անոր գրականության մեջն՝ իր ժամանակին իմաստափական ուսուցման բոլոր տարերքը. քերթողականն ու հոներությունը, քերականությունն ու բառարանը, մեկնողականն ու տրամասացությունը, դավանաբանությունն ու մինչև անգամ ֆոլլուրը. ամենքն ալ ընդելուզված ոսկի հատակի մը վրա, որ իր բանաստեղծությունն է, իր հոգեկան խառնվածքին ամեննեն տիրապետող գիծը, իր էությունն իսկ. վասնդի ամեն բան ավելի բանաստեղծ մըն է ան, մեր մեծագույն բանաստեղծը»²⁷:

Ինչ որ սակայն մեծագույն հատկանիշը կնկատե Նարեկին, անոր հարազատությունն է հայ ժողովուրդի հոգիին. «Բայց ինչ որ իսկապես ուշագրավ է իր մեջ և հատկանշական, սա իրողությունն է մանավանդ, թե Նարեկացիին մեջ ներշնչումի և հմտության մարդը ինքն ու իր ցեղն է գերազանցապես. ոչինչ կա իր մեջ կեղծ ու օտարոտի: Եվ այս է պատճառը, որ հակառակ անիմանալի խրթնաբանություններուն, որոնք հաճախ անթափանցիին մոռալովը կպարուեն իր տողերը, հակառակ զարտուղություններուն՝ որոնք կընդունեն լեզվի ու ճշտության ամեն կանոն, ան կմնա դարձյալ ներքնապես հասկցված և սրտախոսիկ մատենագիրը, որ գաղտնիքն ոմի ամենը մոգելու, ամեն սրտի մեջ աստվածայինին զգացումը վառելու»²⁸:

Թորգոմ սրբազն շընդունիր սակայն, որ արքաբան ազդեցություն ըլլա Նարեկացիի մեջ տիրապետողը. Նարեկացիի ոճին ակը գտնելու համար պետք է Ոսկեղար երթալ. «Ոճը մարդն է». ո՛չ մեկ որիշի համար այնքան ճիշտ պիտի ըլլար կիրարկել վճիռը, որքան Նարեկացիին համար, իր գրիշը պատկերն է իր անհատականության, իզուր պիտի ըլլար անոր ոճին մեջ տեսնել արաբերենին աղքացությունը. այդ լեզուն, ինչպես և հունարենը, իսպառ անծանոթ մնացած է իրեն.

և ինչ որ մեկին կամ մյուսին պատրանքը կթվին տալ մեզի անոր մեջ, պետք է բացատրել առ առավել ազդեցությամբ մեր հին— նույնիսկ ոսկեղարյան— գրականության մեջ, զոր օրինակ Կորլունի և Ազաթան-գեղոսի մեջ ի հայտ եկած մատենագրական երևությներուն, և հետո հելլենական դպրոցի բազմաթիվ գործերուն, որոնցմե ո՛չ մեկը կրնար անծանոթ մնացած ըլլալ իրենին նման միտքի մը»²⁹:

Նարեկ, որ վերջին երկն էր Նարեկացիին, մինաւոյն ատեն եղավ անոր գլուխ-գործոցը, որուն շնորհիվ է, որ Նարեկացին կապրի դարերուն հետ մեկտեղ. «Ի՞ր գործերուն մեջ ոչ միայն վերջինն է ան, այլ նաև գերազանցը, ըլլալով ամեննեն կատարյալ արտահայտությունը իր հոգիին: Առանց անոր, այսինքն լոկ մյուսներով, իր անունը փայլակի ցոլք մը միայն պիտի եղած ըլլար մեր գրականության հորիզոնին հեռավոր մեկ կետին վրա. ասով՝ դարերուն հետ կապրի ինքը, մեր հավատքին երկնքին վրա նշովելով իր հոգիին խորհրդալուց պայծառությունը»³⁰,

Նարեկի գլխավոր հմայքը իր բանաստեղծության, հետևաբար իր արվեստին մեջ կդուն Գուշակյան³¹:

Բայց ինչ որ բացադիկ կդուն Գուշակյան Նարեկացիի մեջ, անոր ճիգն է հոգեկան կապանքները խզելու, և նոր հորիզոն բանալ անոր՝ անձնատոր մտասքանչության. «Անոր մեջ կտեսնես աղօթի պայմանադրական կապերեն դուրս նետված հոգին, որ հայեցողության, այսինքն գերբնականին տեսակ մը անընդիշական հայտնատեսությանը մեջ Աստուծո հետ մտերմական ծանոթության մը գաղտնիքը կինոտե: Ու որքան ավելի կհետամտի այդ բանին, այնքան ավելի կվերանա հոգեռանդն սավառումներով, մինչև որ մտասքանչության (extase) վայրկյանի մը մեջ կմիանա անոր հետ սիրո միացումով, որ անհունապես գերազանց է քան իմացական միացումը:

Ինչ որ ուրիշ խորհրդապահաւու հոգիներու, զոր օրինակ նմանություն Հիսուսի մատենագրին (Թովմաս Գեմբացի) մեջ հաճախած երևությ մըն է ասիկա, Նարեկացիին մեջ սակավադեպ՝ եղական բան մըն է սակայն: Անոր մեջ հոգին, բուռն բայց կարճ փոթորկումք մը ետքը, կդուն միշտ իր անդորրանքը, կատարելության իր իդին հագուրդն ընդունելով կարծես: Մերինին մեջ, անդադրում մըրիկն է, որ կգոռա միշտ, ճեն-ճերող սրտի բոցավառումներուն մեշեն»³²:

26 Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, «Նարեկ», էջ 20:

27 Անդ, էջ 21:

28 Անդ:

29 Անդ, էջ 22:

30 Անդ, էջ 33:

31 Անդ, էջ 24:

32 Անդ, էջ 34—35:

Միստիկականությունն է աս նարեկացին, բայց «... ավելի հայեցի գիծ մը ունի իր միստիկականությունը, ուր մեր ճակատագրին մշտագիշեր մոայլը կա, չկորսված, շուրացված հուսին պայծառությունը փաղդիուն»^{33:}

Նարեկացին, բոլոր բացառիկ մարդոց պես, զերծ չեղավ լոծքանքներեւ, մինչև իսկ հալածանքներեւ, բայց ի հեծուկս բոլոր աղոնց՝ անաղարտ մնաց ան հայ ժողովորդի պաշտամունքին մեջ, ինչպես դիմել կոտա Գուշակյան. ուր կանքը, որ հայեցողական ապրումներու, գրի և գրի տքնությանց, խոսքի և խորհուրդի, նվիրման և ներշնչումի մաքուր կյանքը եղավ, զերծ չմնաց— ինչպես միշտ—հաշաղկոտներու ստգտանքներենն: Բայց ինչպես ժանգը չի կրնար կրծել ոսկին, նույնպես նախանձը հաջողեցավ աղարտել անոր համբավին անբժությունը. և ժողովը, որ անոր կյանքին մեջ շոշափած էր անբասիր արժանիքի մը առաքինությունները, իր մահեն վերը, իբրև սուրբի մը վկայարանը պատվեց անոր գերեզմանը»^{34:}

Նարեկի թարգմանության իր վերջարանին մեջ իրավամբ կմատնանշե Գուշակյան. «Մանր ու դժվարին գործ է Նարեկի պասումնասիրությունը, որ կրնա ամրուց կյանքեր պրավել. անոր անթերի հասկացողությունը կարուտի մեծ տքնությանց, ու կմնա դարձյալ ընդունակ միշտ՝ վերստուգումի և սըրբագրությանց»^{35:}

❖❖❖

Կուգանք այլևս Գարեգին Տրապիզոնցին: Ան ալ, ինչպես Գուշակյանը, բացառիկ գուրգուրանքով կմոտենա Նարեկացիին ու իր Նարեկին, որովհետեւ մեծ վանականին ու իր երկին մեջ ան ալ կտնեն գերագույն մեկ արտահայտությունը հայ ժողովորդի մեծ ճիգին դեպի բարձունք հասնելու, և մեծագույն հաղթանակը, գոր ան տարած է երկիցեւ:

Դուրյանի պատվերը Գարեգին Տրապիզոնցին հետը պտտցուցած է սրբազն պատգամի մը պես Ամենուրեք իր ալ բարձին գիրքն էր եղեր ան, ինչպես կվկայե ինքն իսկ Նարեկի թարգմանության իր հառաջարանին մեջ այդ թարգմանությունը իր վարպետին ձոնելու առթիվ. «Նվերդ նվիրվածիս Հայաստանյալց Եկեղեցու սպասարկության՝ քանաներկու տարիներ շարունակ եղավ ոչ միայն իմ գուրգուրանքի և պաշտամունքի առարկան, այլ նաև իմ սփոփարար ու գոտեպնդի բարեկամը թախիծի ու տըրտ-

33 Անդ, էջ 35:

34 Անդ, էջ 36:

35 Անդ, էջ 626:

մության պահերուն և խորհրդամրմունչ ու սրբազն հուռութքը՝ տառապանքի ու հալածանքի օրերուն: Այդ «Հոգեշշունչ մատյան»-ի մասին սնուցած սերն ու հիացումը, — մանկունի հիշատակներուն հրեշտակային ու բուրումնավետ տարտամությամբը սաղմնավորված, փիթած ու ծլած, — ուռճացեր, ծաղկեր և իրենց գիտակցական հասունության են հանգեր Դպրեվանքի այն խորհրդագամ մանդարձարձ շնորհալի ներշնչումներով էր մագնիսացած, Հայրլուց:

Գարեգին Տրապիզոնցի կուգա իր վարպետին ըսելու, թե հավատարիմ մնաց իր ուխտին իր հետագա կյանքի ամբողջ տևողության. «Բայց ես, Հայր, չէի մոռցեր երրեք Քու ցանկությունն ու հանձնարարությունը՝ ողակն ի նմա պահելու:

Զէի մոռցեր և չէի կրնար ալ մոռնալ, Ընդհակառակը, Նարեկի սերը իմ մեջ ավելի ու ավելի էր արծարծվեր այն սիրով, զոր ես կտածեի ու կտածեմ իմ մտքի ու Հոգու սրբազն ու անզուգական ծնողի նկատմամբ: Զէիր կրնար մոռնալ հուշարար գիրը մը, ուր տասը դարերով իրարմի բաժնված երկու վարդապետներ, մեկն իր աստվածախոս քնարով և մյուսն իր խորհրդաշունչ սրբնգով փորձեր էին կերտել իմ մեջ աստվածային խորհուրդի մը կրակով տոշորող հոգին»^{37:}

Ու հիմա, իբրև տրիտուրը իր ուխտին, կուգա իր վարպետին մատուցանելու Նարեկը աշխարհաբարի վերածված, գիտակից՝ թե ձգտած է անհնարինին, բայց և մաքառած իրականացնելու համար զայն «Քսաներկու տարիներ շարունակ ես իմ աշըքը պահեր եմ այդ պաշտելի ավանդին վրա, զանալով թափանցել ոչիմաստու յոգնաթախանձ գրոցն»: Եվ Նարեկը, ուր մեծ վանականին խորհուրդը կթնձկոտի այնքան հրաշագեղ բազմերանգությամբ՝ գլխապտույտ անդունդներով և բարձունքներով միտքը խորասուցելով ու վերացնելով, միշտ ալ ոնեցավ անհասության մաս մը, ուր մանկության հպանցիկ տպավորություններուն ու մակերսությային զգացումներուն տարտամությունը միայն կպայծառանար աստիճանարար Բայց տիրանալ Նարեկի բովանդակ միտքին, հասնիլ անոր հանձնարին աստվածային թոփիքին, նայիլ, առանց աշքի միտքնության, անոր հոգու բազմացնցուղ ճառագլության, որոնցմով կերտված են իր բա-

36 «Նարեկ, Ողբերգություն Ս. Գրիգոր Նարեկացիի», աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնդի, Կ. Պոլիս, 1926, էջ ԺԴ:

37 Անդ, էջ ԺԳ:

ուրն ու խոսքերը հրաշալիորեն, մեկ խոսքով բաց գիրքի պես կարդալ նարեկացին իր նարեկին մեջ, թերևս այնքան դժվար էր, որքան անհնար է երկինքը գրկել կամ օվկիանն ամփոփել ակնթարթի մը մեջ: Երկու հոգիներու իրերաթափանցումը, երբ անոնցմե մեկը մարմնազերծ հավիտենությամբ մէ երկրեն բաժնված և մյուալ նյութի բոլոր հավանական և ճակատագրային վրիպանքներու մեջ խարիսխափող ու դանդաշող եղկելի մէ, ըղձանք մէ լոկ³⁸:

Թէ ինչ պաշտամոնքի առարկա էր նարեկը ժողովուրդին լայն խավերում մեջ, կարելի է տեսնել այն գեղեցիկ էշեն, ուր Գարեգին Տրապիզոնցի կատամե իր իսկ ծնողթին պատկառանքը գեպի: Աղոթամատյանը³⁹,

Նարեկացին ու նարեկը գտնելու համար Գարեգին Տրապիզոնցին մեզ կտանի նախերեմնի հայ մենաստաններում⁴⁰:

Նարեկի մենաստանը ևս, ուր իր հոգին պիտի գար թթել նարեկացին, մեկն էր այն բացառիկ ուժտերեն, ուր կլայննար անոնց հոգին⁴¹:

Ի՞նչ ավելի շքեղ փաստ այն լայնամտության համար, որ կհասունար այդ վանքերուն մեջ, քան մարդկային անկաշկանդ հոգին նույնիսկ աղոթած ատեն, քան ներուղը, զոր նարեկացին պիտի ձոներ օր մը Աստուծու մորը⁴²:

Ու ահա այդ մենաստանին մեջ էր, որ նարեկացին իր գլուխ-գործոցը երկնեց. «Նարեկը.. Հայ ժողովուրդի շերմեռանդ համբյուններով ու սրտագին պաշտումներով երիցս սրբազնացած և ըստ հոգեգրիչ հեղինակի նախատեսության իսկ՝ «յամս հազար» ապրելու կոչված Սաղմոսարանն է այն, իր պայծառ ոգիով, իր վսեմ և ո՛չ թե «հիվանդու» թոփքով և իր հոյակապ կերտվածքով գերազանց քան Դավթյան տասնաշուն: Անհափշտակելի և անհնանալի սեփականությունն է այն Հայաստանյայց Սիրտին, իր սեփին մեջ անբաղդատելի՝ մարդկային հոգիի և միտքի որևէ արտադրության հետո⁴³:

Գարեգին Տրապիզոնցին համամարդկային հուզումներուն հետ, որոնցմով շաղախված է նարեկը, զայն կնկատե իրեւ ստեղծագործությունը հայ հոգիին: «Համամարդկային խորքին հետ, սակայն նարեկն ու

նարեկացին ունին տարագ մը՝ որ որշափին նախատիպ ու ահնատական՝ կկրե հատկանշական դրոշմը զանոնք ծնող ցեղին, միջավայրին ու պատմության: Անդ տարազը արվեստն է, որ կոչված է հայտնաբերել հոգիին թաքուն գեղեցկությունները միանգամայն, ոյուցազնական գոռ, ողբերգական տիխուր, քարական գողտը և այլ զանազան շեշտերով»⁴⁴:

Նարեկի արվեստին գալով, Գարեգին Տրապիզոնցին զան կնկատե իրու ամենեն սանձարձակ պողիկումներեն մեկը մարդկային հոգիին, սանձարձակ նաև իր արտահայտության ձևին մեջ: «Նարեկը, հազվադեպ կաղացումներով որոնց սպրդումը կարելի է վերագրել գոնե մասամբ անձարակ ու անձաշակ ընդորինակողներու, խառն ու տիրական կշուկով զաշնավորված ու մերթ հանգավորված առողանական (prosodidique) ողբերգություն մէ: Տիրապետող շափն է 5+5, որով կակսի նույնիսկ յուրաքանչուր խոսքի խորագիր: Ծի խորոց սըրտից+խօսք ընդ Աստուծոյց: Բայց նարեկացին արվեստը չի մտներ երբեք արվեստականության մը ընդվկեցնող սեղմ սահմաններեն ներս, այլ իր բոնող ու անզուսպ հոգիին կուտա ներշնչումի հորդառատ թթուումներու խաղընթաց, և երեմն գահավիժող հոսանքին: այնպես որ առողանություններն ալ իր հոգիի մերթ մեղմ ու մերթ ուժգին ելեզներուն համաձայն կառնեն կշուկովի երաժշտական բոլոր ազատ ու քաղրահընչուն շափերը»⁴⁵:

Խորքի և ձևի այդ սանձարձակությունը սակայն չի խաթարեր կշուկով ստեղծագործության մը, որ հայ մատենագրության մեջ կցցվի իրու բացառիկ կոթող մը: «Նարեկի մեջ հոս ու հոն ցանցնված նմանատառական շարոցները (alternation), որոնք հետևակ գրի մը տակ խրտուցիչ ճոռումություններ պիտի նկատվեին, նարեկացիի մագաղաթին վրա երաժշտական հաճելի եղանակավորումներ են միայն, որոնք չեն խաթարեր գործին գեղագիտական ընդհանուր ոգին: Այսպես են նաև լեզվական-թերականական այն կանոնազանց այլ պերճ սանձարձակությունները՝ որոնք նարեկացիի քերթողական հանճարի տեսակ մը անհշխանական ոգիեն կպոպթկան և մերթ ներշնչումի ամպածրար ու գլխապտույտ սավառումներուն և մերթ գրչական ինքնամոռաց ու մոլորուն ոստոստումներուն մեջ կուգան ի հայտ»⁴⁶:

38 «Նարեկ», էջ Փէ:

39 Անդ, էջ ԺԴ—ԺԵ:

40 Անդ, էջ ԻԲ:

41 Անդ, էջ ԻԴ—ԻԵ:

42 Անդ, էջ ԻԶ:

43 Անդ, էջ ԻՑ:

44 Անդ, էջ ԱԱ:

45 Անդ, էջ ԼԵ:

46 Անդ, էջ ԼԶ:

Գարեգին Տրապիզոնցին, ուսումնասիրության մեջ, զոր կցած է նարեկի թարգմանության, հայտնվի, ինչպես տեսանք, խորապես թափանցած նարեկացին և անոր ստեղծագործությանց։ Հիացումը, զոր ան ոմն ի գեղի նարեկացին և գուրգուրանքը, որով ան կմոտենա անոր ստեղծագործությանց, ավելի և կշշտեն բախտավորությունը նարեկը ըմբռնած ըլլալու իր բովանդակ խորքին մեց։
Ճամբան հարթված է անոր վերածման համար մեր օրերու գրական լեզվին։

6. ՀԱՅ ՄՏՔԻ ՀՍԿԱՆ

Փակելե առաջ ներկա գլուխը, պետք է անգամ մը և ըսենք, թե նարեկացին դարագլուի մըն է, դարագլուի այս իմաստով միայն, որ նոր էջ մը կրանա ան հայ մտքի պատմության մեջ. բայց այդ էջը կմնա բոլորվին ուրույն, ու չեն հայր անոր հաշորդէջերը պատմության գրքին. ան առանձին գագաթ մըն է, որոն չեն համարձակիր մերձենալ ուրիշները. ան իր մեջ կիտացնե դարերը, որոնք հայ հոգին մեջեն մեջեն անցան, ու անոնց նոր բարձունք կուտա, որպեսզի հայ հոգին կոթողին գալոց դարերուն դիմաց. ան այդ բարձունքին կնայի վաղվան դարերուն, իր խորքն խորհուրդ ու գեղեցկություն բաշելով անոնցմբ ամեն մեկուն, իր փառքը պահելով միշտ բոլորին վեր։

Արդարին նարեկացին աննմանելի մնաց, և գեր կմնա ահա տասր դար է։ Դարերը, իրմեառաջ ու իրմե հետո, իրենց հոգևոր հովումները կրցեր էին պոռիկալ մեկը մյուսեն ավելի անուշ շարականներու մեջ։ մեր տաղասացներն ու աշուլները, իրենց կարգին, տարբեր քաղցրություն բերին թրթացնել հայ քնարին վրա, ու նոր օրերուն, հայ քնարը պանծացուց քերթողներու քանի մը սերունդուն նարեկացին բոլորին վեր է, բայց նաև բոլորին մեջ։

Որ կողմեն ալ դիտես դուն նարեկացին, մեծագույն հսկան կմնա միշտ ան բովանդակ հայ գրականության մեջ։ ինչ թիծեր ալ փնտուս անոր երկին մեջ, ան քեզ կընկճե միշտ լույսի ու բոցի իր հեղեղին տակի։ Ան կախարդ մըն է, որ քեզ հանկարծ անդունդ կիշեցնե, որպեսզի մարդկալին հոգիւն դիրտը տեսնես, և մերթ կտանի քեզ ատաղերուն, որպեսզի քեզ որոնս աստվածային կատարելությունը։ Մերթ ալեկոծ ծով մըն է

47- Այդ ուսումնասիրությունը, որ Շվեյցիլուսները խորպիրը կերե, կոշված էր հառաջարանն ըլլալ վերլուծական խորհրդածություններու, զորս ան պիտի կցեր նարեկի ամեն մեկ գլուխին, ձեռնարկ, որ մեացած է ժրագրային վիճակի մեջ՝ «լյանքի և միշավայրի հոգիստություններուն հետևանքու»։

ան, որ կփոթորկե քու հոգիդ ևս անշափելի խոռվներով, մերթ քեզ կտանի դյութական պարտեզներու, որպեսզի գտնե հոգիդ իր խաղաղությունը, երբ ան կաղոթե, հեղասահատվակի մը մրմունջն է կարծես իր աղերսանքը, բայց հանկարծ զայրուլթ ու բողոք կդառնա իր պաղատանքը ու կփորձե Աստուծո գահը սարսել։ Հայ լեզուն իր բովանդակ շքեղությամբ ու բոլոր իր գանձերով անզոր կմնա իր հոգվույն ճիշը պոռիկալու, ու նոր կերպարանք կառնե, անզուսպ բառերու հեղին մեջ ժայթքելու իր ներսի կրակը։ Միտիկ մըն է, որ խորհրդավագոր իր բառերուն մեջ կսովող անբացարելին, ու հանկարծ իրապաշատ մը կցցվի գեղի դեմդ, որուն ոչինչ նորթ չուրչի աշխարհնեն։ Սիմվոլներով կսոսի ան մերթ քեզի, բայց իր հոգին քեզ լայն կրանա, որպեսզի իշնես մինչև խորերը։ Նարեկացին իր նարեկին մեջ հայ հոգիին, գերագույն ճիգն է բարձունք հասնելու։

Կանցնին դարերը զիրար հերքելով։ Սերունդներ կուգան հեգնելով իրենց նախորդները, որդինները կուգան և կուրանան իրենց հայրերը։ Տախտակներ կփշրվին ու կգրվին ուրիշները, կուրքեր կգորիին վար և ուրիշներ կրարձրանան անոնց տեղու։ Ի՞նչ աստղեր, շողալի հետո պահ մը, անդունդը կիմնան, և ի՞նչ հոշակներ մոռացության գիրիկը հանճարներն են միայն, որոնց աշուկերը գիրիկ հանճարներներն են միայն, ու տասնյակ դարեր գեռ կանցնին, բայց ան մնաց ու պիտի մնա իր անսասան փառքին մեջ։

Ամբողջ տասր դար է, հայ հոգին կապրի անոր հմայրին տակի Ի՞նչ փույթ, թե անմեկնելի էին հաճախ անոր բառերը, անթափանցելի իմաստներով լի։ Հայ ժողովուրդը սիրեց անսվաղութել։ Հուռութք մըն էր ան շարին ու շարիքին գեմ, փորձությանց ու պատուհաններուն գեմ, ու ժողովուրդը իրմե զայն երբեք շրամնեց բոլոր մրրիկներուն, բոլոր աղետներուն տաեն։

Նարեկը վկա մըն է աշխարհին առզե, թե հայ հոգին կրնա համանի լեռան կատարը, ու անմատելի բարձունքներն նայիլ վար հեգնելու համար դարերը, որոնք փորձեցին զինքը մեղցնել, հեգնելու և ժողովուրդները, որոնք կարծեցին լքացնել զայն աշխարհի երեսնե։

Հայ ժողովուրդը, Նարեկը գրկած, մահը կանգունեն։

(Շարունակելի)